

Ազգային

ԼՁ. ՏԱՐԻ ԹԻՒ 1992 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 29 ՅՈՒՆԻՍ 2015
• VOL. XXXVI, NO 1992 • LUNDI, 29 JUN 2015 • MONDAY, JUNE 29, 2015


1915-2015
ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
100-ՐԳ ՏԱՐԵՎԱՐԶ



ԿԸ ՅԻՇԵՄ ԵՒ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՄ

Նիքոլայ Պորտիլժա. «Լեռնային Ղարաբաղի իրավիճակի սրման պարագային Հայաստան կրնայ լրացուցիչ ուժեր ստանալ ՀԱՊԿ-էն»

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման տեսանկյունից ԵԱՀԿ Մինսքի խումբի ձեռնարկը ամենայնուհանդերձ է: Տեսակավորաբար ձեռնարկը ասուլիսի ընթացքին, ըստ Tert.am-ի, այսպիսի յայտարարություններում է Հաւաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) գլխավոր քարտուղար Նիքոլայ Պորտիլժան:



Անոր խօսքով՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերելու ՀԱՊԿ-ի դիրքորոշումը կը մնայ նոյնը:

«ԵԱՀԿ Մինսքի խումբը շատ մանրակրկիտ կ'ուսումնասիրե այդ խնդիրը եւ ոչ մէկ այլ հիմնարկ պետք է մասնակցի այդ գործընթացին», - յայտարարած է Նիքոլայ Պորտիլժան՝ շարունակելով. «Մենք անընդհատ Հայաստանէն կը ստանանք տուեալներ ԼՂ հակամարտության գոտիին վրայ սպաննուածներու եւ կրակոցներու մասին: Բացի այդ՝ պետք է ընդգծել, որ Հայաստանը՝ որպէս ՀԱՊԿ լիիրաւ անդամ, իրավիճակի սրման պարագային իրաւունք ունի լրացուցիչ ուժեր ստանալու», - ըսած է ՀԱՊԿ գլխավոր քարտուղարը:

ՀԱՊԿ գլխավոր քարտուղարը տեղեկացուցած է նաեւ, որ Սեպտեմբերի վերջը եւ Հոկտեմբերի սկիզբը Հայաստանի
Շար. էջ 14

Հռոմի Պապը յորդորած է բարեգործներուն՝ քրիստոնէաներուն օգնելու ատեն չմոռնալ քրիստոնէութեան օրրան Հայաստանը

Մերձաւոր Արեւելքի քրիստոնէաներու անասելի տառապանքներուն վրայ աչքերը բանալու կոչ հնչած է Վատիկանի մէջ՝ Արեւելեան եկեղեցիներու օգնութեան միաւորման ընդլայնուած նիստի մասնակիցներու ընդունելութեան ժամանակ: Հռոմի Պապ Ֆրանսիսը յայտարարած է, որ այսօր կարգ մը անձերու՝ հազարաւոր մարդոց կեանքէն աւելի՝ կը հետաքրքրեն զենքն ու քարիւղը:



Հռոմի Պապը եւս մէկ անգամ ընդգծած է, թէ որքան կը վրդովեցնէ անոնց վարքագիծը, որոնք բառացի խաղաղութիւն կը քարոզեն, իսկ իրականութեան մէջ մահ կը սփռեն: «Հարկաւոր է աւելի մեծ ջանքեր գործադրել, - ըսած է ան, - արմատախիլ ընելու համար գաղտնի համաձայնութիւնները, որոնց պատճառով հազարաւոր մարդոց՝ կանանց, երեխաներու, ծերունիներու կեանքը շահի նժարին շատ աւելի քիչ կշիռ ունի, քան քարիւղն ու զենքը, եւ երբ խաղաղութիւն ու արդարութիւն հռչակելով, կը հանդուրժենք մահ վաճառողներուն այդ հողերուն վրայ»

Ֆրանսիս Պապը խնդրած է բարերարներուն օգնել յատկապէս Եթովպիոյ եւ Երիթրեայի քրիստոնէաներուն՝ չմոռնալով քրիստոնէութեան օրրան Հայաստանի մասին: Պապը աւարտած է իր խօսքը Վերածնունդի մասին սուրբ Եփրեմի օրհներգէն մեջբերումով:

Մերձաւոր Արեւելքի քրիստոնէաներուն համար հիմնական սպառնալիքը կը բխի ահաբեկչական «Իսլամական պետութիւն» խմբաւորումէն:

Պելճիբայի վարչապետը կառավարութեան անունով ճանչցաւ Հայոց Ցեղասպանութիւնը

Հինգշաբթի՝ 18 Յունիս 2015-ին, Պելճիբայի խորհրդարան ներկայացուցաւ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման բանաձեւի մը նախագիծը, որ Պելճիբայի կառավարութեան կոչ կ'ուղղէ ճանչնալու Հայոց Ցեղասպանութիւնը եւ օժանդակելու Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւններու բարելաւման:



Նիստին ընթացքին Պելճիբայի վարչապետ Շարլ Միշել երկրի կառավարութեան անունով ճանչցաւ Հայոց Ցեղասպանութիւնը: «Ես կը կարծեմ, որ 1915-1917 թուականներուն Օսմանեան կայսրութեան մէջ տեղի ունեցած ողբերգական իրադարձութիւնները պետք է որակուին իբրեւ Ցեղասպանութիւն, եւ ատիկա նաեւ Պելճիբայի կառավարութեան դիրքորոշումն է», ըսած է ան՝ պատասխանելով Ֆլամանտական ժողովրդական շարժումի պատուաւոր նախագահ, երեսփոխան, Հայոց Ցեղասպանութեան ճանաչման բանաձեւի նախագիծի հեղինակ Փիլթըր տը Ռուվերի հարցումին:

Ֆլամանտական անկախներու եւ ժողովրդավարներու կուսակցութեան անդամ Փաթրիք Տեալ իր կարգին կարելոր նկատած է Ցեղասպանութեան պաշտօնական ճանաչումը: «Այսօր մենք ակնյայտօրէն տակաւին կը դժուարանանք սահմանել այդ փաստը: Ատիկա Ցեղասպանութիւն էր, եւ կարելոր է, որ մենք այդ մասին աներկբայօրէն նշենք նաեւ իբրեւ պետութիւն», նշած է ան:

Շար. էջ 14

Նախագահ Սարգսեան ընդգծած է Համահայկական խաղերը բարձր մակարդակով իրականացնելու կարելորութիւնը

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեան Յունիս 17-ին հրաւիրած է խորհրդակցութիւն՝ Համահայկական ամառնային 6-րդ խաղերու կազմակերպիչ անդամներու մասնակցութեամբ: Քննարկուած են Օգոստոս 2-ին մեկնարկելիք Համահայկական խաղերու նախապատրաստման կազմակերպչական աշխատանքներու ընթացքը եւ մինչեւ խաղերու բացումը իրականացուցիչ աշխատանքները:



Ինչպէս կը տեղեկացնէ ՀՀ նախագահի աշխատակազմի հասարակայնութեան եւ տեղեկատուութեան միջոցներու հետ կապերու վարչութիւնը, ՀՀ վերահսկիչ պալատի նախագահ, Համահայկական խաղերու համաշխարհային կոմիտէի նախագահ (կազմակերպիչի նախագահ) Իշխան Չաբարեանը զեկուցած է, որ խաղերու հանդիսաւոր բացումը պիտի կատարուի Հանրապետական մարզադաշտին մէջ, իսկ փակումը՝ Օգոստոս 13-ին, Թատերական հրապարակին վրայ: «Միասնութիւն մարզախաղով» կարգախօսին տակ խաղերը տեղի պիտի ունենան Երեւանի, ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտի, Գիւմրիի, Վանաձորի, Արովեանի, Արտաշատի մէջ:

Համահայկական խաղերուն, ըստ կանոնադրութեան, կը մասնակցին քաղաքներու մարզական խումբերը: Կազմակերպիչի նախագահը ներկայացուցած է խաղերու ծրագրին մէջ ընդգրկուած մարզաձեւերը, այդ մարզաձեւերէն իւրաքանչիւրին մասով մինչ այժմ ստացուած յայտերը, նաեւ յայտ ներկայացուցած քաղաքներու եւ մասնա-

կիցներու թիւը, որոնք պիտի ամփոփուին յայտերու ընդունման վերջնաժամկետէն՝ Յունիս 15-էն ետք:

Խորհրդակցութեան մասնակիցներուն ներկայացուած են նաեւ Համահայկական խաղերու տարեգրութիւնը՝ սկսած 1999 թուականէն, մարզակառոյցներու վիճակը, տարբեր նախարարութիւններու եւ գերատեսչութիւններու մասով ծրագրուած աշխատանքները:

Նախագահ Սերժ Սարգսեան ընդգծած է Համահայկական խաղերը բարձր մակարդակով իրականացնելու կարելորութիւնը եւ տուած է համապատասխան յանձնարարականներ՝ շեշտելով, որ Համահայկական 6-րդ խաղերը տեղի կ'ունենան Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած ձեռնարկներու ծիրէն ներս եւ կը պահանջեն բոլոր պետական մարմիններէն եւ խաղերու պատասխանատուներէն առաւելագոյն ջանքեր՝ զայն պատշաճ կազմակերպելու եւ իրականացնելու համար:

Նալբանդեան. «Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանի որոշումով չէ, որ կ'ընթանան Արցախի հիմնախնդիրի լուծման բանակցութիւնները»

Վերջերս, Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան «Ազատութիւն» ծայնասփիւռի կայանին տուած հարցազրոյցին ընթացքին մեկնաբանեց Եւրոպական դատարանի որոշումը Լեռնային Ղարաբաղի տագնապին առնչուող երկու գործերով:



Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանը բաւարարած է Մինաս Սարգսեանի հայցը ընդդէմ Ատրպէյճանի եւ Էլիսան Չիրագովի եւ այլոց հայցը ընդդէմ Հայաստանի՝ առաջարկելով երկու երկիրներու կառավարութիւններուն ստեղծել մեքանիզմ մը, որուն օգնութեամբ դարաբաղեան պատերազմին հետեւանքով ինչքերէ եւ կալուածներէ զրկուած այդ անձերը կարենան վերականգնել իրենց սեփականութեան իրաւունքը եւ փոխհատուցում ստանալ:

Չիրագովի հայցով Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանին մէջ տրուած որոշման մասին ատրպէյճանական մեկնաբանութիւններու վերաբերեալ հարցումին Էդուարդ Նալբանդեան պատասխանեց. «Մարդկային իրաւունքներու եւրոպական դատարանի ծիրին մէջ կամ հովանիին ներքեւ կամ միջնորդութեամբ չէ, որ կ'ընթանան Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրի լուծման բանակցութիւնները: ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահութիւնը միջազգային լիազօրութիւն ունեցող միակ ձեւաչափն է, որ կը զբաղի հիմնահարցին լուծումով»:

Պաշտօնական Պաքուի յայտարարութեան մէջ ըսուած է. «Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարութիւնը ողջունած է Եւրոպական դատարանի որոշումը, որ փաստօրէն վերջ դրաւ Հայաստանի ժխտողականութեան՝ կապուած Ատրպէյճանի տարածքներու ապօրինի բռնագրաւումով առնչութիւն եւ Ատրպէյճանի տարածքին մէջ զինուորական ներկայութիւն ունենալու հետ»:

Հայաստանի արտաքին գործոց նախարարը հակադարձեց. «Չիրագովի հայցով տրուած որոշումը կը վերաբերի անհատական դատական գործին, որ չի կրնար ազդել դարաբաղեան հիմնախնդիրի լուծման շուրջ բանակցային հոլովոյթին վրայ: Ատրպէյճանի կողմէ յիշեալ

որոշման շահարկումը կրնայ միայն վնաս հասցնել խաղաղ լուծման ջանքերուն: Գաղթականներու եւ տեղահանուած անձերու վերադարձի իրաւունքին կապուած հարցերը բանակցային հոլովոյթի բաղկացուցիչ մաս կը կազմեն: Անոնք կրնան լուծում ստանալ հիմնախնդիրի համապարփակ լուծման շնորհիւ: Այս մասին կը նշուի նաեւ դարաբաղեան հիմնախնդիրի լուծման վերաբերեալ եռանախագահող երկիրներու ղեկավարներու յայտարարութիւններուն մէջ»:

Միւս կողմէն Հայաստանի պաշտօնական կեցուածքը Եւրոպական Միութեան հետ յստակօրէն կը քննարկուի, երբ Երեւանի մէջ ՕԹԱՆ-ի խորհրդարանական վեհաժողովի Ռոզ Ռոթ սեմինարին ընթացքին Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան պատասխանելով Սերպիոյ խորհրդարանի պատգամաւոր Տուարովթա Ֆիլիփովսքայայի հարցումին, թէ ինչպիսի՞ն պիտի ըլլան Հայաստանի հետագայ քայլերը Եւրոպական Միութեան հետ յարաբերութիւններուն ուղղութեամբ, ըսաւ, որ Հայաստան չէ հրաժարած Եւրոպական Միութեան հետ ընկերակցման համաձայնագիրը ստորագրել:

«Հայաստանի պատճառով չէ, որ Եւրոպական Միութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ չստորագրուեցաւ ընկերակցման համաձայնագիրը, ատիկա լրիւ այլ պատճառներ ունէր: Մենք առաջարկեցինք ստորագրել ընկերակցման համաձայնագիրի քաղաքական մասը, բայց մեզի ըսին, որ ատիկա

ամբողջական փաստաթուղթ է: Իսկ յետոյ Ութրանիոյ հետ ստորագրուեցաւ խոր եւ համապարփակ ազատ առեւտուրի գօտիի մասին համաձայնագիրը», նշեց Նալբանդեան՝ յոյս յայտնելով, որ յառաջիկայ օրերուն Եւրոպական Միութեան խորհուրդը կը հաստատէ լիազօրութիւնը եւ կարելի կ'ըլլայ շարունակել բանակցութիւնները Հայաստանի եւ Եւրոպական Միութեան միջեւ:

Իսկ իտալացի պատուիրակի հարցումին, թէ թուրքերը Հայաստանի հետ սահմանի բացումը կը կապեն հայկական հիւլէական կայանի գոյութեան հետ, եւ ատիկա իրականութեան մէջ խնդիր է, թէ՞ պարզապէս առիթ, Նալբանդեան պատասխանեց. «Դուք ճիշդ էք, ատիկա շատ հաւանաբար կեղծ առիթ է: Թրքական կողմը կը փնտռէ տարբեր առիթներ, որոնց միջոցով կրնայ Հայաստանի դէմ արտայայտուիլ: Հայաստանի եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարներուն միջեւ 15 հանդիպում տեղի ունեցած է, եւ այդ հանդիպումներէն ոչ մէկուն ժամանակ թրքական կողմը արծարծած է հայկական հիւլէական կայանին հարցը»:

Հայաստանի արտաքին գործոց նախարարը անգամ մը եւս կրկնեց, որ Հայաստան եւ Թուրքիա համաձայնած են արձանագրութիւններ ստորագրելու առանց նախապայմաններու, եւ հիմա թրքական կողմը պէտք չէ որբէ պայման առաջ մղէ:

Պատասխանելով պատուիրակներէն մէկուն այն հարցումին, թէ Եւրասիական տնտեսական միութեան միանալէ ետք դարաբաղեան տագնապին մէջ որբէ տեղաշարժ կա՞յ, թէ՞ ոչ, Նալբանդեան ըսաւ. «Եւրասիական տնտեսական միութեան Հայաստանի անդամակցիլը ոչ մէկ կապ ունի դարաբաղեան տագնապին հետ: Երեւան ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահներուն հետ կը շարունակէ ջանքեր գործադրել դարաբաղեան հարցին խաղաղ լուծման ուղղութեամբ: Վերջին օրերուն սահմանագիծին վրայ իրավիճակը տակաւին հանդարտ է: Մասնագետները ատիկա կը կապեն Պաքուի մէջ ընթացող Եւրոպական խաղերուն, սակայն նշաններ կան, որ Ատրպէյճան չէ հրաժարած իր սահմանափակ քաղաքականութենէն»:

Մովսէս Յակոբեանը նշանակուած է ՀՀ զինուած ուժերու ընդհանուր հրամանատարի տեղակալ



Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Սերժ Սարգսեան Երկուշաբթի՝ 15 Յունիս 2015-ին, հրամանագիր ստորագրած է զնդապետ-գորավար Լիովա Մնացականեանը Հայաստանի Հանրապետութեան զինուած ուժերու ընդհանուր հրամանատարի տեղակալի պաշտօնէն ազատ կացուցելու մասին:

Հանրապետութեան Նախագահի այլ հրամանագիրով մը, զնդապետ-գորավար Մովսէս Յակոբեան նշանակուած է Հայաստանի Հանրապետութեան զինուած ուժերու ընդհանուր հրամանատարի տեղակալ:

ԱՊԱԳԱՅ
Շաբաթաթերթ

ABAKA

Hebdomadaire Arménien
Armenian Weekly ISSN 0382-9251

Publié par /Published by
Le Centre de Publication Tékéyan
825 rue Manoogian, Saint-Laurent,
Québec H4N 1Z5

Tél: (514) 747-6680 • FAX: (514) 747-6162
e-mail: abaka@bellnet.ca
www.tekeyanmontreal.ca

**Պատասխանատու խմբագիր՝
ԱԵՏԻՍ ՊԱԳԱՆԵԱՆ**

**Ծանուցումներու,
նուիրատուութիւններու եւ
գրասենեակի պատասխանատու՝
ՍԱԼԻՄ ՄԱԿԿՈՍԵԱՆ**

**Թորոնթոյի պատասխանատու՝
ՄԱՍԵՍ Բ. ՄԱՄՈՒԲԵԱՆ**

Canada
2nd Class \$80 (QC & ON)
1ère classe/first class \$90
U.S.A. 1st class (US)\$90
Autres pays/Other countries:
1st class (US)\$120
Per issue \$1.75

Dépôt légal: Bibliothèque du Québec

PM40015549R10945

TPS/GST - R119209294 • TVQ/PST #1006268699

Սելինա Տողան. «Սփիւռքահայերը որպէս թշնամի կը ներկայացուին»

Թուրքիոյ կառավարութեան գլխաւոր ընդդիմադիր Հանրապետական ժողովրդային կուսակցութեան խորհրդարանի նորընտիր հայ անդամ Սելինա Տողան պաշտօնապէս ստացած է պատգամաւորական լիազօրութիւնը, որմէ ետք տրուած մամլոյ ասուլիսին ընթացքին Տողան փափաք յայտնած է մօտիկ ապագային տեսնել ոչ միայն հայ պատգամաւորներ, այլ նաեւ ասորի դատաւոր, հրեայ զնդապետ ու փոքրամասնութեան անդամ այլ ներկայացուցիչներ, տարբեր ոլորտներու պատասխանատու պաշտօններու վրայ:

Տողան խօսած է նաեւ Հայոց Զեղասպանութեան մասին: Հայ պատգամաւորը ըսած է, որ պէտք է հրաժարիլ մինչեւ այս ցուցաբերուող ծայրայեղական վերաբերմունքէն եւ համերաշխութեան միջավայր ստեղծել:

Տողան յոյժ կարելոր համարած է Թուրքիոյ հայ համայնքին եւ աշխարհասփիւռ 7-8 միլիոն հայերուն միջեւ քննարկման աւելի ժողովրդավար ու դրական միջավայր ապահովել, հաշուի առնելով նաեւ Հայաստանի բնակչութիւնը:

«Անոնց, որոնց գիտեք «Սփիւռք» անունով, որպէս թշնամի կը ներկայացուին: Անոնք այն մարդիկն են, որոնք Անատոլիայէն վտարուած են



եւ Անատոլիան կարօտով կը յիշեն: Այս հարցին անհրաժեշտ է մօտենալ աւելի խաղաղ միջոցներով, առանց թշնամացնելու ու անոնց պահանջներն ու զգացմունքները նկատի առնելով», նշած է Տողան:

“We acknowledge the financial support of the Government of Canada through the Canada Periodical Fund (CPF) for our publishing activities.”

Canada

Արուեստի Ծիրանի Գօտի Մը

ՊԵՐՃ ԳՈԳՈՐԵԱՆ

Մշակույթի պատմության մեջ են, առաջնորդներ կու գան, որոնք՝ իրենց արուեստի թռիչքին, դատողության կամ ճաշակին համեմատ, կը յեղափոխեն, կը յեղաշրջեն կամ մեկ խօսքով կը կերտեն հասարակության ախորժը:

Մեր պարագային, եթե առնենք թատրոնի մշակույթը, պիտի նկատենք թե՛ վերջին ժամանակաշրջանին, վերոյիշեալ յեղաշրջումը,- հետեւաբար եւ ճաշակը՝ մոնթրեալահայ բեմը սիրողներուն,- ուրիշ ուղղութիւն սկսած է առնել:

Տարիներու ընթացքին «Հայ Բեմ»ը, տարբեր բեմադրիչներով, բացատրականը եղած է մեր այս վերլուծումին. մանաւանդ երբ բեմադրիչները եղած են արուեստի գորուոր առաջնորդներ:

Իսկ այժմ, Նանսի Իսսա Թորոսեանը, Նո՛ր ճաշակով, Նո՛ր մօտեցումով եւ պարտադրիչ արուեստով, սկսած է մաս կազմել, ժամանակին յարմար, յեղափոխ-բեմադրիչներու դասակարգին:

ծագումով՝ Brigitte Tavitian, ազդուած եղեռնի ցաւերէն, իր այս գողտրիկ գիրքով, ծնունդ կու տար Նանսիի բեմական խանդավառութեան:

Եթե մօտենանք գիրքին, ո՛չ մէկ թատերական, ո՛չ մէկ երկխօսական (dialogue) կամ ո՛չ մէկ բեմական դիւրութիւն կը ներշնչէ: Ի՞նչը մղեց, Նանսիին, այս գիրքով, բեմական քայլ մը առնելու, մեզի համար անհասկնալի է: Միայն երեւակայական թռիչք պետք է ունենալ, այդ զգայացունց գիրքը վերակենդանացնել, Կոմիտասեան թատերգութեամբ մը:

Անմահ Վարդապետին երգախառն ելոյթը, մոմերու բոցերով ստեղծուած ջերմեռանդ մթնոլորտը, մանաւանդ **օտար** հասարակութեան համար երեք լեզուով՝ այս ներկայացումը, յաւելեալ աստղ մը եղաւ Թեթեան Մշակ. Միութեան առաքելութեան երկնակամարին վրայ:

Իսկ դերակատարները, աւելի ճիշդը ըսելու համար, մեր իրական կեանքին մօտեցող ու մօտեցնող անհատները՝ *Գրիգոր Օսկերիչեան* (հայերէն), *Ռոպեր Աբարտեան* ու *Արտէն Արապեան* (ֆրանսերէն) եւ



Գրիգոր Օսկերիչեան

Յակոբ Ռեճէպեան



Քլօէ Պալեան

Գրիգոր Օսկերիչեան



Թամար Փանոսեան

Գրիգոր Օսկերիչեան

Յակոբ Ռեճէպեան



Չախէն աջ՝ ետեւը.- Սօնիա Գալեմճեան Սիմէթիէ, Քլօէ Պալեան, Ռոպեր Աբարտեան, Յակոբ Ռեճէպեան, Նանսի Իսսա Թորոսեան, Թամար Փանոսեան, Գրիգոր Օսկերիչեան, Արտէն Արապեան, Լորա Թէլլալեան եւ Ժիլիէթա Թորոսեան
Առջեւը.- Փաթիլ Տարաքճեան, Ժազլին Աճամեան, Տէլֆին Ժազար, Սիլվա Մելքոնեան եւ Ֆլօրիտա Պալեան

Զանի մը տարիներու իր տարած ջանքերով, մանաւանդ «Հայ Բեմ»ի ընտանեկան մթնոլորտէն քաջալերուած՝ Նանսի կրցաւ կերտել թատերական **Նոր** դպրոց մը:

Ուրեմն, ո՛ր կ'առաջնորդէ մեզի այս բոլորը:

Ներկայ եղանք 4 անգամ կրկնուած անանխընթաց երեկոյթներու շարքերէն մէկուն:

«Աննախընթաց»ը չենք ըսեր ճիշտաբար:

Առաջին անգամ ըլլալով, թերեւս համայն հայ թատերական պատմութեան մէջ, կը հրամցուի 3 լեզուով ներկայացում մը:

Անսայթաք, մէկը միւսէն գեղեցիկ այլ մաքուր առոգանութեամբ, 3 լեզուները, ֆրանսերէնը, անգլերէնը եւ հայերէնը, փայլեցան, յաջորդաբար Մայիս 31, Յունիս 7, 13 եւ 14, 2015ին, Թ.Մ.Մեան սրահին մէջ:

«Je m'appelle Gomidas» («Me-moires»): Պատրաստուած օտար ընթերցողներու համար (երկլեզու՝ ֆրանսերէն եւ անգլերէն), միաժամանակ հայ հասարակութեան համար, պատուաբեր հրատարակութիւն մըն է: Յեղինակը՝ Delphine Jacquart,

Յակոբ Ռեճէպեան (անգլերէն), արդարացուցին իրենց վստահուած ծանր այլ հաճելի պատասխանատուութիւնը: Անոնք մեզի տուին օրուան պատշաճ երեւոյթը:

Որքա՛ն հարազատ, որքա՛ն Կոմիտասեան արձագանգներ էին Կռունկը, Տէլէ Եաման, Ծիրանի ծառ, որոնք կը ցնցին մեր յուզումի ու զգացումի թելերը, *Քլօէ Պալեանի*, *Թամար Փանոսեանի* կամ *Ներսէս Խաչոյեանի* բացառիկ կատարումով:

Պատկերներու տեւական շարժումը, գունաւոր երաժշտական պատշաճ այլ աշխոյժ ընթացքը՝ *Արտէն Արապեանի*, *Նարա Գալքասի* եւ *Կորին Գոյունեանի* (դաշնամուր). *Յակոբ Ռեճէպեանի* (կիթառ) եւ *Արթիւր Մարկոսեանի* (սրինգ եւ տուտուկ) կը պահէին հանդիսատեսի լարուած ուշադրութիւնը:

Երբեմն յիշեցինք, իբրեւ աննախընթաց **թատերական** ներկայացում: Արդեօք թատրոն՞ էր սա, թէ բեմական նորոյթներով սամունքի երեկոյ մը. երգախառն ներկայացում մը՝ ուր միայն խունկը կը պակսէր:

Ո՛չ մին, ո՛չ ալ միւսը՝ առանձին:

Արուեստի գանազան գոյներու ու տարբեր ոճերու միախառն ներդաշնակութիւն մը: Անբակտի գեղեցկութեամբ իրարու կապուած, փայլ մը աւելի տալով իրարու, կամ առնելով իրարմէ:... մէկ խօսքով՝ մշակույթի երկնակամարին վրայ, խաղաղութեամբ գծուած արուեստի գունաւոր գիծերու խումբ մը: Այո՛, արուեստի ծիրանի գօտի մը:

Տնցիչ էր ներկայացման բացումը: Հայը՝ միշտ իր երախտագիտութիւնը յայտնած է այն կարգ մը - այս պարագային թուրք թէ քիւրտ - անհատներուն, որոնք փորձած են ազատարարի դեր կատարել, եղեռնի՝ ցաւի ու կսկիծի օրերուն:

Իսկ ներկայացման փակման՝ նոյնքան ցնցիչ էր հակադրութիւնը՝ Հայուն բողոքով, առ Աստուած: Ո՛ր էր Ան - ինչո՞ւ լքած էր այս անմեղ ազգը. որմէ ետք պատահեցաւ, կրկնակ հակադրութիւնը «Տեր Ողորմեայ»ով - բառածայն՝ Յասմիկ Գասպարեան, Նորա Գալգաս, Ներսէս Խաչոյեան եւ Աւետիս Սալիգեան:

... Եւ մարեցան մոմերը:

Օրուան ամենազգալի յայտնութիւններէն էր 10-ամեակ Թոմաս Շահպաղեանը: Ան մագնիսացուց մեզ իր ջուրակի թռչողներով:

Խորքը՝ պաստառին վրայ, կար եւ Կոմիտասի շուքը, դանդաղ, անորոշ ու կորսուած շարժումներով, որոնց կը խառնուէին *Մեղեդի Աղուրեանի* հեզաճկուն պարի ելեւեջները:

Եւ քանի, դէպքը կը պատահէր հիւանդանոցին մէջ, ուրեմն *Սօնիա Գալեմճեան Սիմէթիէ*, *Ժազլին Աճամեան* եւ *Լորա Թէլլալեան* իրենց հիւանդապահուիչի դերով եկան ամբողջացնել յաջողութեան շոջանակը:

Իսկ ներկաները յոտնկայս բուն ծափահարութիւններով, հազիւ թէ կարենային ձեռքազատուիլ իրենց զսպուած յուզումէն:

Յուզուած էր ե՛ւ գիրքին հեղինակը՝ Տիկ. Delphine Jacquart-ը... Եւ որքա՛ն բաւարար շնորհակալական արտայայտութիւններ կրնար ունենալ իր փակման խօսքով, ի դիմաց այսպիսի գոյնզգոյն ստեղծագործութեան մը... այսպիսի արուեստի ծիրանի գօտիի մը առաջ...

Հայոց Ցեղասպանության հարցը քննարկուած է Լորտերու պալատին մէջ

Մեծ Բրիտանիոյ եւ Հիւսիսային Իռլանտայի Միացեալ Թագաւորութեան Լորտերու պալատը Յունիս 16-ին քննարկած է Հայոց Ցեղասպանութեան հարցը:



Ըստ «Արցախփրէս»-ի՝ Միացեալ Թագաւորութեան խորհրդարանի պաշտօնական կայքը կը փոխանցէ՝ 1915 թուականին հայերու, յոյներու եւ ասորիներու զանգուածային սպանութիւնները որպէս Ցեղասպանութիւն որակելու ՄԹ կառավարութեան դիրքորոշման մասին առաջին հարցը բարձրացուցած է պարոնուհի Զեքը:

Ընդգծելով, որ աշխարհի 20-է աւելի երկիրներու խորհրդարաններ ճանչցած եւ դատաւարտած են Հայոց Ցեղասպանութեան փաստը, ինչպէս նաեւ Եւրոպական խորհրդարանի եւ Ուելշի համագումարի ընդունած բանաձեւերը՝ պարոնուհին հարցուցած է՝ արդեօք ՄԹ կառավարութիւնը որեւէ մտադրութիւն ունի՞ վերանայելու իր դիրքորոշումը եւ ցեղասպանութիւն ճանչնալու 1915 թուականի իրադարձութիւնները: Զեքը նաեւ յիշեցուցած է Հոմբի Ֆրանսիս պապի խօսքերը այն մասին, որ Ցեղասպանութեան ճանաչումը անհրաժեշտ է ապաքինման, հաշտեցման եւ առաջ շարժելու համար:

Կառավարութեան անունէն Պահպանողական կուսակցութեան անդամ, Զորթաուոնի կոմս (The Earl of Courtown) Ճեյմս Սթոփֆորտը պատասխանած է, որ ՄԹ կառավարութիւնը կը ճանչնայ 20-րդ դարասկզբին Օսմանեան կայսրութեան մէջ բնակող հայ ժողովուրդին եւ այլ խումբերուն հասցուած սարսափելի տառապանքները: «Յիշելով եւ յարգելով անցեալի զոհերուն յիշատակը, մենք կը գտնենք, որ ՄԹ գերակայութիւնը պետք է ըլլայ օգնել Թուրքիոյ եւ Հայաստանի կառավարութիւններուն ու ժողովուրդներուն՝ համատեղ առերեսուելու իրենց ընդհանուր պատմութեան», - նշած է Սթոփֆորտը: Ան աւելցուցած է, որ կառավարութիւնը տեղեկ է 1915 թուականի զոհերու յիշատակին նուիրուած պատարագի ժամանակ Հոմբի պապի ըրած յայտարարութեան եւ կը յարգէ անոր տեսակետը այդ հարցին շուրջ:

«Մենք համամիտ ենք, որ շատ կարեւոր է խիզախութեամբ առերեսուիլ պատմութեան դասերուն եւ մեր կարողութիւններու սահմաններուն մէջ ամէն հնարաւորը ընել՝ նման վայրագութիւնները կանխելու համար», - նշած է ան:

Հարցուպատասխանի ժամանակ լորտ Լինտըն Հարիսընը, պարոնուհի Սառա Լատֆորտը եւ լորտ Ուիլիամ Պալմը հարցեր յղած են հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման եւ հաշտեցման վերաբերեալ՝ մասնաւորապէս խնդրելով ներկայացնել, թէ ինչ քայլեր կը ձեռնարկէ ՄԹ-ը այդ յարաբերութիւնները բարելաւելու ուղղութեամբ:

Ճեյմս Սթոփֆորտը դրական գնահատած է այն, որ վերջին խորհրդարանական ընտրութիւններուն հայկական ծագումով պատգամաւորներ ընտրուած են խորհրդարանին մէջ: Ան նաեւ նշած է, որ ՄԹ կողմէ ֆինանսաւորուող Չինիսկ կրթաթոշակային ծրագրի ծիրէն ներս քննարկումներ կը ծաւալին նաեւ հայ եւ թուրք շրջանաւարտներու միջեւ: Մեծ Բրիտանիոյ եւ Հիւսիսային Իռլանտայի Միացեալ Թագաւորութիւնը նաեւ աջակցած է հայկական հասարակական կազմակերպութիւններէն մէկուն՝ Նախաձեռնութեան, որուն ծիրէն ներս տպագրուած է Ցեղասպանութեան ընթացքին հայերը փրկած թուրքերու կեանքին մասին պատմող գիրք:

ԼՂՀ պաշտպանութեան նախարար նշանակուած է Լեւոն Մնացականեանը



the Office of the NKR President

Նախագահ Բակո Սահակեան Յունիս 15-ին ստորագրած է հրամանագիր, որուն համաձայն՝ զօրավար-հարիւրապետ Մովսէս Յակոբեանը ազատ կացուցուած է Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան պաշտպանութեան նախարար-պաշտպանութեան բանակի հրամանատարի պաշտօնէն:

ԼՂՀ նախագահի աշխատակազմի տեղեկատուութեան գլխաւոր վարչութեան փոխանցմամբ՝ Նոյն օրը երկրի ղեկավարը ստորագրած է հրամանագիր՝ զօրավար-հարիւրապետ Լեւոն Մնացականեանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան պաշտպանութեան նախարար - պաշտպանութեան բանակի հրամանատար նշանակելու մասին:

Նախագահի մէկ այլ հրամանագիրով՝ Արցախի Հանրապետութեան մատուցած բացառիկ ծառայութիւններուն համար զօրավար-հարիւրապետ Մովսէս Յակոբեանը պարգեւատրուած է «Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանով:

Յունիս 17-ին Նախագահ Սահակեան այցելած է ԼՂՀ պաշտպանութեան նախարարութիւն եւ բանակի հրամանատարական կազմին ներկայացուցած է նորանշանակ նախարար Լեւոն Մնացականեանը:

Նախագահ Սահակեան երախտագիտութիւն յայտնած է պաշտպանութեան նախկին նախարար Մովսէս Յակոբեանին իրականացուած ծաւալուն աշխատանքին համար՝ ընդգծելով, որ անոր հրամա-

նատարութեան տարիներուն պաշտպանութեան բանակի մարտունակութիւնը հասած է նոր մակարդակի, լուծում տրուած է բազմաթիւ խնդիրներու:

Բակո Սահակեան վստահութեամբ նշած է, որ Մովսէս Յակոբեանը պիտի շարունակէ իր հարուստ փորձն ու գիտելիքները ներդրել Հայաստանի Հանրապետութեան զինուած ուժերու գլխաւոր շտապի պետի տեղակալի նոր պատասխանատու պաշտօնին:

Խօսելով նորանշանակ նախարարին մասին՝ երկրի ղեկավարը նշած է, որ Լեւոն Մնացականեանը հարուստ փորձ, բանակին մէջ մեծ հեղինակութիւն եւ յարգանք վայելող, խոր գիտելիքներ ունեցող զօրավարներէն է, որ լաւագոյնս դրսեւորած է իրեն զբաղեցուցած բոլոր պաշտօններուն մէջ:

Արցախի Հանրապետութեան զինուած ուժերու գերագոյն գլխաւոր հրամանատարը համոզուած է, որ Լեւոն Մնացականեանը Նոյն եռանդով կ'աշխատի նաեւ որպէս պաշտպանութեան նախարար ու պաշտպանութեան բանակի հրամանատար՝ իր ամբողջ կարողութիւնները ուղղելով բանակի զօրացման եւ անոր մարտունակութեան շարունակական բարձրացման համար:

Հանդիպման ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան նախարար Սեյրան Օհանեանը, պաշտօնատար այլ անձիք:

ՄԻԵԴ-ը հրապարակած է Արցախի վերաբերեալ երկու դատավճիռ

Մարդու Իրաւունքներու Եւրոպական Դատարանի Մեծ պալատը 16 Յունիսին հրապարակած է «Զիրագովը եւ միւսները ընդդէմ Հայաստանի» եւ «Սարգսեանը ընդդէմ Ատրպէյճանի» երկու գործերով վճիռները՝ համապատասխանաբար Լեռնային Ղարաբաղի Բերձորի շրջանէն ազգութեամբ քիւրտ Չիրագովներու ընտանիքի եւ Ատրպէյճանի վերահսկողութեան տակ գտնուող Շահումեանի շրջանի Գիւլիստան գիւղէն Սարգսեաններու ընտանիքին կողմէ բարձրացուած: Անոնք կը պահանջէին իրենց տունները վերադառնալ եւ ունեցուածքին տիրանալու իրաւունքները վերականգնել կամ արդար փոխհատուցում ստանալ:

Երկու զանգատները դատարանին ներկայացուած էին 2005 եւ 2006 թուականներուն: Որպէս Չիրագովներու գործով պատասխանող կողմ՝ ՄԻԵԴ-ը հրաւիրած էր Հայաստանը:

Երկու ընտանիքները դատարանէն կը պահանջէին վերականգնել իրենց նախկին ունեցուածքին նկատմամբ իրաւունքները, որոնք խախտած էին 1992-1994 թուականներուն պատե-

րագմին իբրեւ հետեւանք, երբ 1992-ին անոնք ստիպուած եղած էին լքելու իրենց տունները, իսկ պատերազմի աւարտէն ետք անոնց կարելիութիւն չէր տրուած վերադառնալու նախկին բնակութեան վայրերը:

Դատարանը բաւարարած է կողմերուն պահանջները եւ պարտաւորեցուցած Հայաստանն ու Ատրպէյճանը հետամուտ ըլլալու երկու ընտանիքներու խախտած իրաւունքներու վերականգնման: ՄԻԵԴ-ը նաեւ ճշդած է, որ այս երկու գործերով տրուած վճիռները ուղեւնային պիտի ըլլան այս խնդիրին առնչութեամբ հետագային ստացուելիք զանգատներուն վերաբերեալ որոշումներ կայացնելու ատեն:

Չիրագովները դատարանէն կը պահանջէին իրենց կորսնցուցած ունեցուածքին համար Հայաստանէն գանձել՝ իբրեւ վնասներու փոխհատուցում, 7.9 միլիոն եւրօ:

Սարգսեանները Ատրպէյճանէն կը պահանջէին շուրջ 570,000 եւրօ՝ իբրեւ փոխհատուցում:

Դատարանը այս հարցին վերաբերեալ վճիռ

կայացումը յետաձգած է 12 ամիսով՝ կողմերուն կարելիութիւն տալով բանակցութեան միջոցով սահմանել երկուստեք ընդունելի փոխհատուցման չափը:

ՄԻԵԴ-ի Մեծ պալատը Չիրագովներու դատին գծով նաեւ սահմանած է, որ Հայաստան Լեռնային Ղարաբաղի նկատմամբ ունի քաղաքական, տնտեսական եւ ռազմական զգալի ազդեցութիւն, որուն իբրեւ արդիւնք Լեռնային Ղարաբաղի վրայ «կը կատարէ արդիւնաւետ վերահսկողութիւն», հետեւաբար Հայաստանը պատասխանատուութիւն կը կրէ Լեռնային Ղարաբաղի մէջ տեղի ունեցող իրաւախախտումներուն համար:

ՄԻԵԴ-ի մէջ Հայաստանէն ընտրուած (նախկին) դատաւոր Ալվինա Գիւլումեան ներկայացուցած է յատուկ կարծիք: Յատուկ կարծիքներ ներկայացուցած են նաեւ չորս դատաւորներ: ՄԻԵԴ-ի Մեծ պալատին վճիռները բեկանման ենթակայ չեն եւ կը փոխանցուին ԵԽ Նախարարներու կոմիտէին՝ անոնց գործադրութեան հսկելու նպատակով:

Այս յուշերուն նախկին հատուածը տեսնել Ապագայի Ապրիլ 13-ի թիւին մէջ

Իմ Յուշերս

(Շարունակութիւն 2)

Գլուխ 1 Կ՝ սկսիմ սկիզբէն

Ծնողքս

Որքան որ կը հաւատամ թէ Աստուած կ'ստեղծէ իւրաքանչիւր անձ իրեն իւրայատուկ նկարագրով, միտքով, խիղճով եւ յատուկ անհատականութեամբ որ կը տարբերի աշխարհի վրայ ապրող միլիառաւոր միւս բոլոր անհատներէն, նոյնքան այլ կը հաւատամ թէ իւրաքանչիւր անձ, աւելի կամ պակաս, սակայն բաւական չափով կը ձեւաւորուի եւ կ'ազդուի իր ծնողաց եւ ընտանիքին ստեղծած մթնոլորտէն, մտածելակերպէն եւ մանկութեան եւ պատանեկութեան ապրած շրջապատէն:

Յետեւաբար այստեղ հակիրճ ակնարկ մը պիտի սկսիմ տալ հայրիկիս եւ մայրիկիս մասին: Աւելի վերջ տեղին համաձայն պիտի կրկին անդրադառնամ ընդհանրապէս ընտանիքիս, մատնանշելով յատկապէս այն երեւոյթները, որոնք իրենց ազդեցութիւնը գործած են իմ անձիս՝ եւ կեանքիս տեւողութեան ընթացքին, իմ գործելակերպիս վրայ:

Հայրս, Արամ Կեօնճեան իր մօրը կողմէ Մեյմարեան, եւ մայրս Աննիկ Պետրոսեան իր մօրը կողմէ Պօտիկեան, երկուքն ալ ծնած են Ատանա, մօտ տասը տարուայ տարբերութեամբ: Երկուքին ալ ընտանիքները, բնականաբար բոլորովին անջատաբար իրարմէ, ենթարկուած են 1909-ի Ատանայի ծանօթ ջարդերուն տխուր հետեւանքներուն:

Մեծ հայրերս մահացած են այդ շրջանին տարագրութեան ճամբուն վրայ, թէեւ ճշգրիտ չեմ յիշեր անոնց մահուանց պարագաները:

Հօրս ընտանիքին մեծ մանչ զակիկն ամբողջ երազը եղած է փախչիլ այնտեղէն եւ երթալ Ամերիկա, սակայն Ամերիկայի ճամբուն վրայ կանգ առած ըլլալով Եգիպտոսի Աղէքսանդրիա նաւահանգիստ քաղաքին մէջ, պարագաներու աննախատես դարձումով միանգամ ընդմիջտ մնացած են հոն, մինչեւ որ, ինչպէս պիտի յիշեմ աւելի վերջ, շատ աւելի վերջ, 1963 թուին, հայրս եւ մնացեալ անմիջական ընտանիքս, առանց ինծի, քանի որ ես որպէս ուսանող կը գտնուէի Ֆիլադելֆիա դոկտորականս պատրաստելու ընթացքին մէջ, բոլորը մեկնած են Հայաստան:

Հայրս, Եգիպտոսի մէջ, առաջին իսկ օրէն, տակաւին պատանի, Աղէքսանտրիոյ մէջ շուկայ նետուած է ինքզինքին եւ ընտանիքին ապրուստ ապահովելու հրամայականով:

Ան նախ այդ մարդու դերձակի օգնական, ապա լաւ գնահատուած դերձակ դարձած է եւ սակայն վաճառականութիւնը նախընտրելի նկատելով, դարձած է կերպասավաճառ, երկար տարիներ իր խանութը ունենալով Աղէքսանտրիոյ ծանօթ Rue de France կերպասավաճառներու փողոցին վրայ:

Հայրս բնականաբար շատ համեստ իր սկզբնաւորութենէն, բարձրացած է եւ հասած է յարգուած եւ բացառաբար պարկեշտ վաճառականի մը դիրքին:

Ան ինքզինքին եւ մեր ընտանիքին ապահոված է «բարձր միջին դասակարգի» պայմաններ:

Օրինակի համար հայրս ժամանակի ընթացքին կառուցեց երեք յարկանի վարձկալական շէնք մը ուր ծնած եմ ես Հոկտեմբեր 2, 1935-ին եւ ապրած ենք այնտեղ մինչեւ ներգաղթի առաջին մեծ փոթորիկը 1947 թուին, որուն պիտի անդրադառնամ աւելի վերջ: Այդ շրջանին է որ հայրս ծախեց ամեն ինչ վաճառեց տուն եւ խանութ եւ ամենքս, մինչ կ'սպասէինք մեզ հայրենիք փոխադրելիք սովետական Քոբեճա նաւուն ժամանման, ամիսներ եւ աւելի վերջ տարիներ անցուցինք պառկելով կազմուած եւ կապուած սնտուկներու վրայ...: Այդ նաւը երբեք չ'եկաւ: Միայն 1963 թուին, երբ ես, ինչպէս յիշեցի, արդէն մեկնած էի Միացեալ Նահանգներ ուսումնառելու համար, երկրորդ ներգաղթի ընթացքին, ընտանիքս մեկնեցաւ Հայաստան:

Մօրս ընտանիքը Պետրոսեան-Պօտիկեան

գերդաստանը նոյնպէս ի վերջոյ Աղէքսանտրիա եկած եւ հաստատուած էր, սակայն անոնք եղած են անոնցմէ որ Ատանան թողելով նախ աւելի բախտաւոր տարագիրներու նման, եզան կառքերով, զացած են Հալէպ, Սուրիա, յուսալով տեսնել Կիլիկիոյ ազատագրումը եւ իսկապէս ալ 1918-ին մեծ յոյսերով վերադարձած են Ատանա, շուտով ենթարկուելով սակայն, բոլորիս ծանօթ ազգային մեծ յուսախաբութեան եւ երկրորդ անգամ ձգելով Ատանան եկած են հաստատուելու Եգիպտոս:

Մայրս բացառաբար ուշիմ աշակերտ մը եղած է յաճախելով նախ Աղէքսանտրիոյ Պօղոսեան ազգային վարժարանը ապա տեղւոյն Ֆրանսական Զոյրերու վարժարանը: Մօրս բոլոր տարեկիցները, մինչեւ այստեղ Գանատա, առանց այլեւայլի կը վկայեն ըսելով «Աննիկ մայրիկդ շատ խելացի էր...»: Իսկապէս ալ մեր տունը լեցուն էր, հաստափոր եւ ոսկեզօծ կողբերով մրցանակի հատորներով որ ինք շահած էր շարունակաբար իր աշակերտութեան ընթացքին:

Եթէ հայրս ինձ դաստիարակած է խստութեամբ եւ պարկեշտութեան անսակարկելի հասկացողութեամբ, մայրս պահանջած է ինձմէ (նոյնը նաեւ անշուշտ մեծ եղբորմէ Աբրահամէն եւ կրտսեր բրոնջմէ Ալիսէն) անսակարկելի կերպով մտածել եւ գործել հետեւելով առողջ տրամաբանութեան: Մայրիկիս խօսքերը մինչեւ այսօր կը հնչեն ականջներուս մէջ «Տղաս անիմաստ բան պիտի չընես...»: Այդպէս ալ մինչ ինք ճանչցուած էր ծանօթներուն մէջ, որպէս իր սերունդի խելացին, ես ալ իմ կարգիս ինծի ծանօթներուս մէջ շատ հեռու չի մնացի այդ որակումէն...

Ուսումնական յաջողութիւններուս արմատը կը նկատեմ մայրիկս:

Անդրանիկ եղբայրս Աբրահամը, բնականաբար, պարկեշտութեան եւ տրամաբանութեամբ գործելու նոյն դաստիարակութիւնը ստացած է, ինձմէ ալ առաջ, որպէս չորս տարեկան աւելի մեծ անդրանիկ զաւակ : Սակայն նաեւ որպէս երեք զաւակ ան միշտ ալ իր վրայ առաւ աւելի մեծ ընտանեկան պատասխանատուութիւն, մանաւանդ ներգաղթի թոհ ու բոհին ընթացքին եւ անկէ ետք, երբ իր գլխաւորութեամբ էր որ 1963-ի հայրենադարձութեան կարաւանը ճամբայ ելած էր Աղէքսանտրիայէն դէպի Հայաստան, ուր ան ինքզինքին ապահովեց բարձր բարոյական պահպանող համալսարանի փրոֆեսորի պատւաբեր տեղ մը, մինչեւ 1988-ի ահաւոր երկրաշարժը որմէ հրաշքով մազապուրծ ազատեցաւ մեր ամբողջ ընտանիքը: Այդ մասին եւս պիտի յիշեմ աւելի վերջ:

Քրոջս, Ալիսին, մասին եւս պիտի գրեմ աւելի վերջ: Ան ալ եղած է միշտ իր դասարանի լաւագոյնը կամ լաւագոյններէն մէկը:

Դպրոցական կրթութիւնս:

Հայկազեան նախակրթարանը:

Անձի մը մտաւորական եւ հոգեկան ձեւաւորման կարեւորագոյն ազդակներէն մէկն ալ յաճախած դպրոցական միջավայրը եւ ստացած դաստիարակութիւնն է անկասկած: Մասնաւորապէս կարեւոր է նախակրթարանի շրջանը, իր պատանեկան տարիները, մինչեւ տասներեք տասնչորս տարեկան, ուր անոր միտքը եւ հոգին պատրաստ են լեցուելու եւ տպաւորուելու ամեն տեսակի տեղեկութիւններով եւ փորձառութիւններով: Հայ տղուն համար այս պարագան շատ աւելի շեշտուած է երբ ան կը յաճախէ հայ վարժարան եւ երբ ան, այդ տարիներուն, բնակատեղիէն սովորականէն աւելի զգայուն է եւ հակամետ է սորվելու, հարցաքննելու եւ եզրակացութիւններու հասնելու:

Չորս տարեկան հասակիս մայրս ինձ տեղաւորեց Աղէքսանտրիոյ Հայկազեան Կրթարան դպրոցը ուր յաճախեցի մինչեւ աւարտական



Հ.Բ.Ը.Մ. Կեդրոնական Վարչական Ժողովի երկարամեայ նախկին անդամ եւ փոխ-նախագահ մինչեւ 2010, այժմ Կ.Վ.Ժ.-ի վաստակաւոր (Emeritus) անդամ: Ռ.Ա.Կ. Կեդրոնական Վարչութեան երկարամեայ նախկին անդամ եւ Ատենապետ մինչեւ 1995: Գանատայի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Թեմի հիմնադիրներէն եւ Թեմական Խորհուրդի անդրանիկ Ատենապետ, ապա հռչակուած Պատուոյ Ատենապետ: Ամերիկայի եւ Գանատայի Թ.Մ. Միութեան Կեդրոնական Վարչութեան հիմնադիր անդամ: Մոնթրէալի Թ.Մ. Միութեան հիմնադիրներէն, Ատենապետ այժմ Պատուոյ Նախագահ: Մոնթրէալի Ալեք Մաւուկեան Վարժարանի Հիմնադիր եւ Գործադիր Նախագահ մինչեւ 2011:

Եօթներորդ դասարանը եւ շրջանաւարտ եղայ 1949 թուականին, տասնչորս տարեկանիս:

Հայկազեան Կրթարանը ծանօթ է այդ շրջանի Աղէքսանտրիայէրուն որպէս սեփական վարժարան, որ ընդունուած էր որպէս սովորականէն աւելի խնամեալ կրթութիւն տուող հաստատութիւն:

Պատճառը պարզ էր: Հայկազեան Կրթարանի հիմնադիրը եւ տերը Աղէքսանտրիոյ հոգեւորականներէն, բացառիկ, բարձր կրթութիւն ստացած Աւագ քահանայ, Տէր Հայկազուն Ռուկերիչեանն էր, որ շրջանաւարտ էր Փարիզի Սորպոն համալսարանէն: Տէր Հայկազունը բնականաբար հրաշալի կերպով կը տիրապետէր ֆրանսերէն լեզուին: Ան խիստ եւ բժախնդիր մանկավարժ անձնաւորութիւն մըն էր: Այդ պատճառաւ ալ ուզած էր ստեղծել իր իսկ վարժարանը, համապատասխան մակարդակով եւ զայն կոչած էր «Կրթարան» եւ ոչ թէ պարզ «Վարժարան»: Բնականաբար Տէր Հայկազուն ուներ շատ նախանձորդներ: Հիմա կեանքի ամբողջ փորձառութիւնս ունենալէ ետք այսօր, շատ բնական եւ ակնկալելի կը գտնեմ դժբախտաբար այդ պարագան:

Տէր Հայկազուն հեղինակն էր ընկերային եւ բարոյական խնդիրները վերլուծող եւ անոնց լուծումներ առաջարկող բազմաթիւ հատորներու: Բարձրագոյն կարգերուն մէջ ինք անձնապէս կը դասաւանդէր «Բարոյագիտութիւն» նիւթը ուր կ'օգտագործուէր իր հեղինակած դասագիրքերը:

Յատուկ երախտագիտութեամբ կ'ուզէմ անդրադառնալ Հայկազեան Կրթարանէն ստացած դաստիարակութեանս, ազգային թէ բարոյական եւ թէ ընդհանուր ուսումնական իմաստով:

Դիւրաւ կարելի է հասկնալ թէ յատկապէս իմ պարագայիս որքան նշանակալից եղած են ինձ համար Հայկազեանի տարիներս, որոնք կը համապատասխանեն 40 ական տարիներուն, որոնք կը զուգադիպին մինչեւ 1945 համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներուն, ապա առաջին ներգաղթի արտասովոր ապրումներով, յուզումներով, խանդավառութեամբ եւ յուսախաբութեամբ լեցուն, շրջանին:

Քանի մը յատուկ փորձառութիւններ կը յիշեմ այդ օրերէն, որոնք մնայուն հետքեր ձգած են իմ վրաս:

Անոնցմէ մէկն էր պատերազմի վերջին տարիներուն, այդ օրերու Ամենայն Հայոց Հայրապետին Գեւորգ Չեօրեքեան Կաթողիկոսին կոչը

Ֆրանսահայերու ջանքերով՝ Լ. Ղարաբաղի 3 գիւղերու մէջ համայնքային կեդրոններ կը կառուցուին

«Հայաստան» համահայկական հիմնադրամի Ֆրանսայի տեղական մարմնի հովանաւորութեամբ՝ Լեռնային Ղարաբաղի Կիւրաթաղ (Հատրուրի շրջան), Գետաւան (Մարտակերտի շրջան) եւ Սարգսաշէն (Մարտունիի շրջան) գիւղերուն մէջ մեկնարկած են համայնքային կեդրոններու կառուցման աշխատանքները:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի հասարակայնութեան հետ կապերու բաժնի փոխանցմամբ՝ ծրագիրները կը համաֆինանսաւորուին ԼՂՀ կառավարութեան կողմէ: Այս համայնքներու բնակիչները՝ շուրջ 1030 մարդ, հիմնականօրէն կը զբաղին հողագործութեամբ եւ անասնապահութեամբ:

Մէկ յարկի տակ բուժկետի, գրադարանի, հանդիսասրահի ու գիւղապետարանի կեդրոնացումը նպատակ ունի արդիւնաւետ դարձնել այս ենթակառուցուածքներու շահագործումն ու տնտեսվարումը:

Շնորհակալութիւն յայտնելով Ֆրանսայի մեր հայրենակիցներուն՝ համայնքներուն ղեկավարները հա-



ւաստած են, որ այս ձեռնարկը արդէն իսկ ոգեւորած է բնակիչները:

«Մեր նախաձեռնութիւններով հայ գիւղացուն սատարելը, լինի դա

Հայաստանում, թէ Արցախում, մեր հիմնական ուղղութիւնն է եւ առաջնահերթութիւնը», - ըսած է «Հայաստան» հիմնադրամի գործադիր տնօրէն Արա Վարդանեանը:

Վիրահայոց թեմի երիտասարդները օժանդակած են Թիֆլիսի բնական աղետէն տուժողներուն

Վիրահայոց թեմի երիտասարդանդամները հերթական օգնութիւնը տրամադրած են Թիֆլիսի մէջ բնական աղետէն տուժածներուն:

Հայ Առաքելական եկեղեցւոյ Վիրահայոց թեմի փոխանցմամբ՝ բաժնի անդամները, երիտասարդական բաժնի աշխատանքներու համակարգող Նինա Սերոպովայի հետ միասին, ներկայացած են Թիֆլիսի Տիտուլատ-Չուղուրեթի շրջանային վարչութիւն եւ Թեմի ու «Հայարտուն» կեդրոնի անունէն յանձնած են օգնութեան հերթական բաժինը: Երիտասարդները տուժածներուն տրամադրած են սննդամթերք, տարբեր տեսակի ձաւարեղէն, անձնական մաքրութեան միջոցներ, հագուստ:

Վիրահայոց թեմէն կը տեղեկացնեն, որ երիտասարդական բաժինը պիտի շարունակէ նմանատիպ բարեգործական նախաձեռնութիւնները:

Իմ Յուշերս...

Շար. Էջ 5-Էն

սփիւռքահայութեան, նուիրահաւաք կատարելու սովետական Հայաստանի բանակը Սասունցի Դաւիթ հրասայլերով օժտելու համար: Նուիրահաւաք կատարուեցաւ ամէն տեղ եւ սակայն ես կը յիշեմ Տէր Հայկազունի կոչը բոլոր աշակերտներուն եւ մեր 9-10 տարեկան աշակերտներուն խանդավառութիւնը հինգ տասը դրողով մասնակցելու այդ դրամահաւաքին: Հրասայլերու վրայ հայ գիւղացիներու ապահովելիք յաղթանակները որքան հեռու կը տանէին մեր պատանեկան երեւակայութիւնը...

Ուրիշ խոր հետք թողած յիշատակ մըն է Գարեգին Յովսէփեանց ծերունագարդ Արքեպիսկոպոսին վարժարան այցը երբ ան Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն գալով կ'ուղեւորուէր դէպի Պէրլու օժուելու համար որպէս Անթիլիասի Գարեգին Ա. Կիլիկիոյ Կաթողիկոսը: Խորապէս տպաւորիչ էր իմաստուն այս եկեղեցականին այցելութիւնը, երբ մենք շարուած սանդուխներու երկու կողմերը, ծափերով եւ երգով կ'ողջունէինք զինք: Չեմ կրնար յիշել բնականաբար այսօր, այդ օրը մեզի կատարած Գարեգին Յովսէփեանց Սրբազանին ելոյթին մանրամասնութիւնները եւ սակայն գիտեմ թէ մեզի փոխանցեց հայրենիքին, Հայաստանին եւ Ս. Էջմիածնին նկատմամբ ջերմութեան եւ սրբութեան զգացում մը, որ մէջս մնաց անջնջելի մինչեւ վերջ: Անթիլիասի Գարեգին Ա. Յովսէփեանց Կաթողիկոսի շրջանին Էջմիածին Անթիլիաս յարաբերութիւնները գործակցութեան հրաշալի ոսկեշրջան մը արձանագրեցին, որ սակայն աւաղ բոլորովին շրջուեցան անոր վախճանումէն ետք 1950-ական թուականներուն եւ անկէ ետք:

Նախակրթարանի վերջին տարիներուս, յուզումնախառն փոթորկումներու շրջան մը պիտի սկսէր եւ քիչ ժամանակ ետք, դէպի հայրենիք առաջին ներգաղթի շարժումը պիտի սկսէր 1946-47 թուին:

Տէր Հայկազունի միակ մանչ զաւակը, Հայկը, որ նաեւ թուրքալեզու ուսուցիչն էր դպրոցին, մեկնեցաւ Հայաստան:

Բայց ահա այդ շրջանին էր որ սկսաւ ցուրտ պատերազմը, որ իր անմիջական տխուր անդրադարձը ունեցաւ Սփիւռքի բոլոր գաղութներուն կողքին, բնականաբար նաեւ Եգիպտոսի եւ Աղէքսանդրիոյ մէջ:

Այդ շրջանին ստեղծուեցաւ «Հայրենասէր ճակատը» որուն մաս կը կազմէին անկուսակցական խոշոր մասսա մը մէջը ըլլալով գաղութի ամենաբարեկեցիկ անդամները: Այս խոշոր

հոսանքին, ներշնչող եւ մտաւորական եւ քաղաքական ուղղութիւն տուողները եղան, առաջին հերթին Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը, եւ նաեւ Ս. Դ. Յնչակեան Կուսակցութիւնը:

«Հայրենասէր ճակատին» բնաբանը պարզ եւ մեկին էր եւ կ'ամփոփուէր հետեւեալ ձեւով,

«Հայ ժողովուրդը սփիւռքի մէջ պետք է մնայ զօրավիզ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին եւ պետք է պահէ իր հոգեկան եւ մշակութային կապերը Հայաստան հայրենիքին հետ, բոլորովին անկախաբար Հայաստանի օրուայ համայնավար վարչակարգի դիմագիծէն որուն գաղափարախօսութիւնը չենք բաժնէր որեւէ ձեւով:

Հայ ժողովուրդը չի կրնար խզուիլ Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն, այնպէս ինչպէս Կաթողիկ աշխարհը չի կրնար խզուիլ Հռոմէն ինչ որ ալ ըլլայ գոյնը այնտեղ տիրող քաղաքական ռեժիմին»:

Այս էր յստակ սկզբունքային կեցուածքը «Հայրենասէր ճակատին» եւ այդպէս ալ մնաց ան յաջորդող գրեթէ կէս դար տեւող ազգային մեծ տագնապներուն ընթացքին, մինչեւ Հայաստանի անկախացումը:

Այս յստակ կեցուածքին շնորհիւ էր որ, երբ քառասուն տարի ետք յանկարծ, բոլորովին անսպասելի համաշխարհային զարգացումներու շնորհիւ, Հայաստան 90-ական առաջին տարիներուն, տիրացաւ անկախութեան, սփիւռքահայութիւնը կապուած մնացած ըլլալով իր հայրենիքին եւ հոգեկան կեդրոն Ս. Էջմիածնին, անմիջապէս կեանք ստացաւ Սփիւռք-Հայրենիք կենարար գործակցութիւնը որուն եկան միանալու մինչեւ այն ժամանակ ինքզինքին այդ կապերէն զրկած սփիւռքի միւս մասնիկները:

Թէեւ այս մասին պիտի անդրադառնամ աւելի վերջ սակայն կ'ուզեմ ստորագծել թէ՛ դժբախտաբար ցուրտ պատերազմի այս շրջանին «Հայրենասէր ճակատին» հակոտնեայ անարդար եւ գաղութները սպառնցող դիրք որդեգրեց շատ աւելի փոքր մաս մը սփիւռքահայութենէն, Հ. Յ. Դաշնակցութեան ազդեցութեան տակ: Այդ օրերուն բոլորովին անիրաւ եւ անտրամաբանականօրէն, դաշնակցութիւնը համայնավարի պիտակ ջանաց կ'պցնէր բոլոր հայրենասէրներու ճակտին, անոնք ըլլան հոգեւորական, հարուստ, մտաւորական թէ որեւէ պարզ հայ հայրենասէր մարդ: Կը բաւէր որ այդ անձը կամ կազմակերպութիւնը դրական դիրք ունենար հանդէպ Մայր Աթոռին եւ Հայաստանին:

Սփիւռքի պատմութեան շատ տխուր մէկ շրջանը եղաւ այդ շրջանը, որուն հետեւանքները եւ յիշատակը դժբախտաբար կարելի չէ բոլորովին սփռել եւ վերցնել մէջտեղէն:

Աւելի վերջ յուշերուս յաջորդական բաժիններ-

րուն մէջ անխուսափելիօրէն պիտի անդրադառնամ այս շրջանին պատկանող ազգային կեանքի երբեմն շատ տխուր եւ լուրջ պարագաներուն եւ պիտի յիշեմ անոնց մէջ իմ անձնապէս ունեցած մասնակցութեանս պարագաներուն:

Թերեւս այս տողերը կարդացողներուն մէջ գտնուին անձեր որ դժգոհութիւն յայտնեն եւ փստսանքով ըսեն թէ «ինչ պետք կայ անցեալի այս ցաւերը կրկին արծարծելու...»: Դժբախտաբար ճշմարտութիւնները չ'արտայայտելով խօսողները իրենք ճիշդ գլխաւոր պատճառն են որ այդ ցաւերը շարունակեն մինչեւ այսօր ալ ազդել մեր ազգային կեանքին վրայ: Անոնք կ'ուզեն հաւատալ եւ հաւատացնել, թէ վերջի մը գոյութիւնը կը վերջանայ եւ կը շոգիանայ առանց քաջութեամբ բուժելու, ջանք կատարելու երբ վրան հաստ կափարիչ մը գետեղէք...: Ահա ճիշդ այդ պատճառաւ ալ մինչեւ այսօր սփիւռքի մէջ կը շարունակենք մենք եւ բազմաթիւ գաղութներ տակաւին անհանգիստ եւ տարբեր ձեւերով բաժանումի վիճակի մէջ ապրիլ, տակաւին շարունակուող եւ գոյութիւն ունեցող ազգային եկեղեցական բոլորովին անբնական վիճակի մը պատճառաւ: Անշուշտ խօսքը Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ բաժնուած ըլլալու իրականութիւնն է, որուն հետեւանքով չը գիտնալ եւ չհասկնալ ձեւացնելով օրինակի համար կ'ուզուի բնական նկատել, որ նոյն աշխարհամասին մէջ գոյութիւն ունենան երկու ինքզինքնին համագործակալուող ուզող Առաջնորդութիւններ եւ հետեւաբար եկեղեցիներ եւ հետեւաբար բաժնուած գաղութային կառոյցներ: Երբեւիցէ տեսնուած է՞, որ քաղաք մը ունենայ երկու անջատ բայց համագործակցութեամբ պետք...: Թերեւս մարդ կայ որուն ուղեղը հանգիստ կ'զգայ այդ անբնական վիճակին մէջ: Իմ սակայն չի կրնար ինքզինք խաբել: Պետք է յուսալ եւ հաւատալ թէ ի վերջոյ այս վիճակը պիտի դարմանուի եւ մտնէ բնականոն վիճակի մէջ յօգուտ բոլորին եւ մանաւանդ յօգուտ մեր ազգի գերագոյն շահերուն:

Այստեղ պիտի կանգ առնեմ կրկին, յաջորդ անգամ շարունակելու համար, անցնելով ուսումնական յաջորդ հանգրուաններուս այսինքն, երկրորդական ուսմանս Lycée Français d'Alexandrie եւ ապա ճարտարապետական ուսմանս Աղէքսանդրիոյ Համալսարանին մէջ եւ այդ ընթացքին եւ անկէ ետք յաջորդող փորձառութիւններուն: Պիտի անդրադառնամ կիսատ մնացած ներգաղթին, Հայաստանեայց Եկեղեցւոյ տխուր բաժանումին, Թեմական ընտրութիւններուն, պայթարներ յաջողութիւններ եւ այլն... որոնց մասնակից եղայ Եգիպտոսի գաղութային կեանքին մէջ, մինչեւ մեկնումս դէպի Ամերիկա:

ABAKA

SECTION FRANÇAISE

LUNDI 29 JUIN 2015

Réunion en Arménie du Conseil œcuménique des Eglises



En cette année du centenaire du génocide arménien perpétré par l'Empire ottoman, le comité exécutif du Conseil œcuménique des Eglises (COE) s'est réuni en Arménie du 8 au 13 juin, pour honorer les martyrs et victimes du génocide.

Le 10 juin, les membres du Comité exécutif du Conseil œcuménique des Eglises ont visité le Mémorial de Tzitsernakaberd pour rendre hommage à la mémoire des saints martyrs du génocide arménien.

Les membres du Comité exécutif ont déposé des fleurs devant la flamme éternelle, puis un service œcuménique conjoint a eu lieu. Les participants ont prié pour les Arméniens tués pendant le génocide arménien, ainsi que pour toutes les personnes grecques et assyriennes qui ont péri dans le génocide.

Les représentants des différentes Églises chrétiennes ont offert leurs prières à Dieu, à la cessation immédiate des conflits, et à la consolidation de la paix dans les pays du Moyen-Orient, en particulier en Syrie et en Irak, ainsi que pour la sécurité des chrétiens.

Le Comité exécutif a rappelé le protocole adopté à l'occasion du 100e anniversaire du génocide arménien, lors de la 10e Conférence du COE tenue à Busan en 2013. Cette étape importante mise en œuvre par la 10e Conférence a été suivie par de nombreuses autres occasions. Pendant des années, le COE a eu un rôle important, dans la sensibilisation et la reconnaissance du génocide arménien. Le protocole adopté lors de la 6e assemblée du COE tenue à Vancouver en 1983 a reconnu que « Le silence de la communauté internationale et même les tentatives délibérées de nier les faits historiques sont devenus une source constante de souffrance et de désespoir croissant pour la nation arménienne, l'Église arménienne et beaucoup d'autres. Alors que certains continuent à faire des efforts pour refuser ou de réduire ces événements historiques, le Comité exécutif a été fortement encouragée par Sa Sainteté le Pape François, par la reconnaissance publique de l'assassinat de masse de 1,5 million d'Arméniens comme un génocide, le 12 avril dernier. Nous soulignons que la communauté internationale a le devoir d'honorer la mémoire des victimes du génocide, pour guérir ces blessures historiques et protéger la récurrence de telles atrocités. »

« Le COE et ses Eglises membres vont continuer à participer aux événements en cours, organisée par la diaspora arménienne, y compris avec la Grande Maison de Cilicie de l'Église apostolique arménienne du 18 au 19 juillet à Antélias, Beyrouth. Le Comité exécutif exprime sa gratitude aux Eglises membres à travers le monde et aux partenaires œcuméniques, qui ont observé ou observeront dans leur contexte le 100e anniversaire, et ont parlé pour le bien de la reconnaissance du génocide arménien. « Grâce à ce souvenir lors des cérémonies nous reconnaissons que ces événements tragiques se sont produits et qu'ils devraient être qualifiés par leur nom. »

Le génocide arménien dans le même contexte historique et politique a été accompagné par des actions génocidaires vers d'autres : les communautés arméniennes, chaldéennes, assyriennes, syriennes et grecques, et surtout envers les chrétiens, ce qui a affecté l'histoire du 20e siècle.

Le rejet, l'oubli et l'absence de sanctions de tels événements encouragent leur récurrence. Ceux qui refusent, ou lèvent la main sur la vie et la dignité de leur sœur et frère, corrompent et détruisent leur nature humaine.

En cette année du centenaire, nous exhortons la communauté internationale, les Eglises membres du COE et les personnes de bonne volonté et de foi, à commémorer et encore à réfléchir à la prévention de génocide et de crimes contre l'humanité. »

Se lamenter ou agir ?

Editorial écrit en anglais par Edmond Y. Azadian et publié dans The Armenian Mirror-Spectator en date du 11 juin 2015

Lors d'une récente visite en Arménie, je me suis rendu dans le Haut-Karabagh. L'amour pour notre patrie historique contribue certainement à l'attachement de tous les Arméniens envers ce morceau de terre. Il faut que l'amour et l'admiration soient toujours là en termes absolus, mais aussi d'un point de vue artistique.

La capitale, Stepanakert, est devenue une ville moderne, une fierté pour les habitants du Karabagh.

La beauté naturelle, luxuriante de ses montagnes, combinée au sens de l'histoire, m'a amené à réfléchir sur ce paradis sur terre : Qui contribue à son développement ? Qui garde ses frontières ? Qui investit dans son économie ?

Il n'y a pratiquement pas de circulation aérienne entre Erévan et Stepanakert, car les Azéris menacent d'abattre tout avion civil. Chaque fois que l'Arménie tente d'initier le transport aérien, l'Organisation pour la sécurité et la coopération en Europe (OSCE) et d'autres parties « impartiales » avertissent le pays à ne pas recourir à des provocations. Ainsi, le diktat azéri d'une politique internationale est appliquée pour isoler le Karabagh et forcer sa dépopulation. Par conséquent, la seule manière d'accéder à l'enclave ou à la visiter sont les transports terrestres, qui dans des conditions idéales, prennent un minimum de six heures d'Erévan à Goris. La route ne répond pas aux normes internationales, mais selon les normes locales est considérée comme confortable.

